

կառակութեանց պատճառ հանդիսանալ, ինչպէս Պաշատուր Վարդապետ (9), որ Լէոպոլդիս դստուեցաւ... այլ խաղաղութիւնը կ'ուզեմ. երբ ուրեմն ձեր Արքեպիսկոպոսը հասնի, չկարենաք իմ նամակէս պատճառ քաղել աւելի աղատօրէն վիճելու համար. ես անմեղ եմ, դուք գիտէք. լաւ է որ սիրով ու խաղաղութեամբ հնազանդիք իրեն իրրեւ ձեր հովուին, քանի որ, ինչպէս ըսի, Հոգեւոր Տէրը չի կրնար ձեզի օգնել...: Այսպէս ընթացէք ձեր Արքեպիսկոպոսին հետ, որպէսզի ձեզի ալ չպատահի ինչ որ պատահեցաւ Լէոպոլսեցիներուն, որոնք նման վիճերու հետեւանքով ա'յնչափ մեծ վնասներ կրեցին, եւ որպէսզի այս ամենուն պատասխանատու չգտնուինք Քրիստոսի Ատեանին առջեւ: Այս պատճառաւ կը խնդրեմ ձեզմէ որ իմ նամակս չյիշէք իրրեւ խոովութեան պատճառ. որովհետեւ ամէնուրեք կը պատարագուի միեւնոյն Քրիստոսը. Պաշին Պորհուրդը ջուրով (Չրախառն գինիով) ալ կը կատարուի, եւ մենք առանց ջուրի (կը պատարագենք): Երկու կերպերն ալ լաւ են: Կը խնդրեմ այս մէկ բանը, որ սիրով վարուիք ձեր Արքեպիսկոպոսին հետ, եւ զիս խնդրի մէջ մի մտցնէք» (Քիլ, 1666 Մայիս 20) (10):

Թէպէտ իր Նուիրակը տեղի կու տար, սակայն Յակոբ Կաթողիկոս յարմար կը դա-

(9) Սաշատուր Կեսարացի, Վիճակաւոր Իսպահանի:

(10) Sac. Gregorio Petrowicz, Ibidem, 203.